

27542

Պրոլետարիատ բողոք Խեցւուների, միացեք

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԵՌՆԱՐԿ

ԳՅՈՒՂԻՍՈՐՑՈՒԹԵՐԻ

ՅԵՎԵՐԶԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ

—ՀԱՄԱՐ—

ԻՆԳՆԱՀԱՐԿՈՒՄ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ



, ԲՓԽԽՍ 1928 թ.

Անդր. Ֆին. Ժող. Կոմ. Հրատարակություն:
Հրատարակիչ՝ յարակագործական հարաբեկություն՝
յարակագործական հարաբեկություն՝ յարակագործական հարաբեկություն՝


336.2
4-82

336-2
9-82

105 JAN 1970


336-216

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացեք



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՐՆՈՐԿ

Ի Ն Ք Ն Ա Հ Ա Ր Կ Ո Ւ
Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն,
Գ Յ Ո Ւ Ղ Ա Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ն Ե Ր Ի
Յ Ե Վ Շ Ր Ձ Գ Ո Ր Ծ Կ Ո Մ Ն Ե Ր Ի
———— Հ Ա Մ Ա Ր —————



ԹՓԽԻՍ 1928 թ.
Անդր. Ֆին. Ժող. Կոմ. Հրատարակություն:
Հրատարակիչ՝ յարկագիր «Նարодное Хозяйство Закавказья»

Թեքիս
Ա. Կ. Բ. Տպարան
Դրամիտ № 2186
Տիրած 4000.



Կ 2912-63

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ.

Մեր պետական բյուջեում, քիչ գեր չեն խաղում այն ծախքերը, վորոնք կատարվում են գյուղատնտեսության վերականգնան. և ամրացման համար: Բավական ե ասել, վոր ԱՍՖԽՆ (Անդրբազմական) բյուջեով 1927-28 բյուջ. տարվա ընթացքում, հիշյալ նախատակների համար բաց ե թողնված 40,490,823 բուբլի:

Բացի այդ, մենք բոլորս գիտենք, վոր գյուղատնտեսության վերականգնման և ամրացման գործը սերտորեն կապված ե գյուղական բնակչության զրագիտության ու նրա ընդհանուր կուլտուրական մակարդակի հետ. Այդ պատճառով խորհրդակին իշխանությունը հիշյալ կարեքների համար բաց ե թողնում մեծ գումարներ: Որինակ. 1927-28 թ. բյուջեով, ժողովրդական լուսավորության համար ԱՍՖԽՆ-ում բաց ե թողնված 25,638,245 բուբլի, իսկ 1928-29 թ. համար նախատեսված ե. գյուղատնտեսությունը վերականգնելու և զարգացնելու համար 66,662,257 բուբլի, ժողովրավորության համար 31,300,760 լ. Բայց, պետության կողմից բաց թողնվելիք միջոցները թեպետ տարեց-տարի ավելանում են, այսուամենայնիվ գյուղի հասարակական, կուլտուրական և տնտեսական բոլոր կարեքները բավարարելու համար, այդ միջոցները գեռ քիչ են ու անբավարար են:

Այդ միջոցները ավելի քան անբավական են՝ ներկայումս, չեր խորհրդակին իշխանության կողմից, կուլտուրական ֆրոնտում ձեռնարկած բոլոր միջոցների հետևանքով, գյուղական բնակչության պահանջները այդ ասպարեզում անհամեմատելի բարեհացել են:

Գյուղական բնակչությունը սկսել է ավելի ու ավելի գիտակցի, զպրոցների, հիվանդանոցների, խրճիթ ընթերցարանների և լավ ճանապարհների կառուցման անհրաժեշտությունն ու նրանց ոգուածը:

Մենք բոլորս տեսնում ենք, վոր գյուղացիական տնտեսության յեկամուտը տարեց-տարի բարձրանում է: Մինչդեռ գյուղացիության հարկալին վճարումները վերջին տարիներում մնացել են զրեթե միենույն հավասարության վրա, վորի հետևանքով դյուղական բնակչությունը հնարավորություն ունի յուր յեկամըտի մի մասը հատկացնելու վոչ միայն յուր սեփական տնտեսության բարելավման ու զարգացման այլ նաև յուր հասարակական ու կոլտուրական կարիքները բավարարելու համար:

Դյուղացիությունը, լավ գիտենալով վոր Խորհրդավին իշխանությունը չնայած յուր ամրող ցանկությանը, հնարավորություն չունի բավարարելու գյուղի բոլոր կարիքները, ինքը կամավոր կատարում է մի քանի ամենակենսական ու ամենաանհրաժեշտ, հասարակա-կոլտուրական և տնտեսական ծախքեր, ինչպես դրամի ու բնամթերքի հավաքելու միջոցով, նույնպես և աշխատանքի մասնակցության միջոցով, այլ կերպ ասած, հիշալ կարիքները ծածկում ե ինքմանարկման միջոցով:

Յարի ժամանակ ել եր գյուղում անցկացվում ինքնահարկում, զանազան անունների տակ (ուսարաֆ, գյուղական խարջ, և այլն): Բայց աչդ ցարական ինքնահարկումը կատարվում էր վոչ թի գյուղացիության կամավոր ցանկությամբ, այլ շրջանաւին «պրիստավի» կամ «ստարշինի» հրամանով: Այդ տուրքերը հավաքվում եին բոլորից համահավասար չափով, անկախ յուրաքանչյուր գյուղացու անտեսության հնարավորությունից: Այդ կարգով գյուղացիներից հավաքվող տուրքերը, գլխավորապես ծախսվում եին գյուղական վարչություն պահելու համար, այսինքն «ստարշինի» (գլախի), գյուղի քրոխիլի, «ստրաժնիկի» աշխատավարձի և այլ նման նորատակների համար:

Խորհրդավին իշխանությունը հենց առաջին որերից, արգելեց արդ «գյուղական խարջերը»: Իսկ գյուղական վարչություն պահելու հետ կապված բոլոր ծախքերը վերցրեց բավարարելու պետական միջոցներից:

Մեր իշխանությունը գտավ, վոր ինքնահարկումը կարող է կատարվել միմիայն կամավոր հիմքերի վրա և միայն այնպիսի կարիքների բավարարման համար, վորոնք կը կում են կուլտու-

րական ու տնտեսական տեղական բնույթ և ունեն հասարակական նշանակություն, ընդունելով վորպիս որենքի հիմք դասակարգավիճ սկզբունքը:

Այնուամենատցնիվ, խորհրդավին իշխանության կողմից սահմանված ինքնահարկման սկզբունքները, կյանքում կիրառելու ժամանակ, գործնականում տեղի են ունեցել մի շարք խեղաթյուրություններ և սխալներ, վորոնք վլխավորապես բխել են այն հանգամանքից, վոր գյուղացիական բնակչության մեծամասնությունը ծանոթ չի յեղել ինքնահարկման հիմնական սկզբունքների հետ:

Ինքնահարկման կիրարկման ժամանակ, ավելի շատ տեղի չեն ունեցել հետեւալ սխալները.

1) Հավաքվող միջոցները ծախսվել մն վոչ իրենց նպատակներին, այն ե—կատարվել ե լրացուցիչ վարձատրում գյուղական վարչական ապարատին: 2) Գյուղացիական տնտեսությունների մեջ ինքնահարկման ընդհանուր գումարի բաժանման ժամանակ, բացակայել ե դասակարգավին մոտեցումը—հաշվի չեն առնվի առանձին գյուղացիական տնտեսության ուժեղությունը, վորը առաջ ե բերել չքավորական և անգամ միջակալին տնտեսությունների գերահարկադրում: Բացի դրանից, մինչև հիմա ինքնահարկման գումարների բաժանելու կարգերի (հարկման ձևերի) մեջ տիրում ե ծայր աստիճանի զանազանություններ: Մի շաբթ տեղերում հարկումը կատարվել ե ըստ տնտեսությունների, մյուս տեղերում ըստ շնչերի քանակի և այլն: Նկատվել են դեպքեր, իերը ինքնահարկման միջոցների գանձումը ընդունել ե այսնադարձ ձևեր, այսպես որինակ միջոցների գանձումը հանձնարարվել ե այն կապալառութիւն, վորի հետ կնքած և յեղել այս կաման աշխատանքի կատարման պայմանագիրը: Տեղ-տեղ բացակայել ե ծրագրավին աշխատանքը և այս կամ այն հասարակական կուլտուր-տնտեսական կարիքները ինքնահարկումով բավարար բերու համար, հաշվի չեն առել ուսաւ (իսկական-փաստացի) հարավորությունները, վորի հետեւեքով նշանակած աշխատանքները մնացել են կիսատ, չեն ավարտվել, հազիվ բավարարելով հարկավոր ծախտերի մեկ տասյերորդական մասը և տարիներով ձգգվել են:

Ինքնահարկման նոր որենքով, զյուղական բնակչությունը հրավիրվում է ակտիվ մասնակցության գյուղի կուլտուրական շինարարության և տնտեսական կյանքի ասպարեզներում, այդ որենքով միանգամայն վերացվում է դասակարգավիճ այն անարդարությունը, վորը մինչև այժմ նկատվել է, և գործնականորեն—կյանքում կիրառելու համար, սահմանվում է ինքնահարկման պարզ և փորոշ կարգեր: Կրճատվում է ինքնահարկման ընդհանուր գումարի չափը: Սահմանվում է վորոշ ցուցակ այն ծախքերի, վորոնք կարելի է ծածկել (բավարարել) ինքնահարկման միջոցով, հաշվի առնելով տվյալ շրջանի տնտեսական լուրահատուկ պայմանները տվյալ ժամանակաշրջանում: Կտրականապես արգելվում է խորհրդների վարչական կարիքների համար կտրարել ինքնահարկում, կամ հավաքված գումարների աննպատճ ծախսելը: Նայենք հիմա մանրամասնորեն թե ի՞նչ կարգով և ի՞նչ կարիքների համար կարելի է կտրարել ինքնահարկում:

I. ԻՆՉ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԼԻ Ե ԿԱՏԱՐԵԼ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄԸ

Ինքնահարկումը թույլատրվում է և կտրարելու, հասարակական, կուլտուր-տնտեսական այնպիսի կարիքների համար, վորոնց մեջ շահագրգոված և տվյալ գյուղի բնակչության մեծամասնությունը: Այդպիսի կարիքների ցուցակը հաստատվում է հանրապետական գործկոմիների կողմից: Վերածենք այդ որինակների, յենթադրենք գյուղում չկա հիվանդանոց, դպրոց, կամ թե չե այդպիսիները գոյություն ունեն բայց վերանորոգումների կարիք են զգում, որինակ վառարան չկա, կամ թե կտուրը կաթում է կամ անհրաժեշտ և շենքը լայնացնել մեծացնել և այլն, կարող են պատահել գեղքեր յերբ գյուղում հիվանդանոց, դպրոց և կամ խրճիթ-ընթերցարան կան, բայց միջոցներ չկա լուսավորության, վառելիքի և մասն վերանորոգումների համար, ահա այդ բոլոր գեղքերում գյուղացիք կարող են այդ կարիքները ծածկել ինքնահարկման միջոցով:

Ինքնահարկումը կարելի է կիրառել բժշկական, անասնաբուժական, բուժակալին, գյուղատնտեսական կայաններ, կամ

խրճիթ-ընթերցարան, կարմիր անկյուն, ակումբ, ժողովրդական տուն, գրադարան, մանկական տներ, պարտեզներ, մոտեներ, և նման այլ ձեռնարկություններ գյուղում կազմակերպելու նըպատակով:

Գյուղը կարիք է զգում միջգյուղան և միջդաշտակին ճանապարհների, գետանցների ու հասարակական նշանակություն ունեցող կամուլչների կառուցման ու պահպահման մեջ, գյուղին անհրաժեշտ է հականրդեհային ապահովություն (հրդեհաշեջ դեպների ու սրահների կառուցում պաշտպանություն և սպասարկություն) այս բոլոր տեսակի կարիքները կարելի է բավարարել ինքնահարկման միջոցով: Այդ կարգով հավաքած միջոցներով կարելի է բարգովել նաև գյուղի բարեկարգությունները, այն ե, կարելի է կարգավորել ու կառուցել ջրհորներ, հանրային աղբյուրներ, լճակներ ջրամբարներ, բաղնիքներ հրապարակներ փողոցներ և այլն, վերջապես, ինքնահարկման միջոցով կարելի է կազմակերպել գյուղի պաշտպանությունը: Ահա թե ինչ կարիքների համար, կարելի է կիրառել գյուղի ինքնահարկումը: Այս կամ այն գյուղում կարող են հանդիպել այնպիսի կուլտուրանուսական կարիքներ, վորոնք չեն նախատեսնված կենտրոնականի վորոշման մեջ: Յեթե գյուղը ցանկանում է այդպիսի կարիքները բավարարել ինքնահարկման միջոծով, հարկավոր է յուր գործկոմի միջոցով հատուկ միջնորդություն հարուցել կենտրոնականի առաջ, այդ նպատակի համար:

Հարկավոր է լավ հիշել վոր ինքնահարկման միջոցով հավաքած միջոցներից խստիվ արգելվում է և վոչ մի գեաքում չի թույլատրվում բավարարել վարչական բնույթ կրող կարիքները, այն ե—իշխանության տեղական մարմինների, գավառակալին գործկոմների, գյուղորհուդների, միլիցիայի աշխատակիցների և գյուղական կատարածուների վարձատրության, այդ մարմինների շենքերի պահպանության ու կահավորման, ինչպես նայել նրանց գրասենյակային, շրջագալության և այլ ծախքերի հոգալը, վորոնք պետք է ծածկեն (բավարարվեն) ի հաշվի բարձել:

Հիմա, յերբ մենք ծանոթ ենք թե ինչ նպատակների համար է կատարվում ինքնահարկումը, անցնենք նրա կիրարկման կարգի հարցին:

III. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Նախ և առաջ պետք է իմանալ, վոր ինքնահարկումը թուշ-լատրվում է ինչպես դրամով—նաև բնական պարհակով (բնա-մթերքով) ու անձնական աշխատանքի մասնակցությամբ։ Գլու-զում գտնվող հասարակական կազմակերպությունները, կոմբջիլը, կոմյերիտմիությունը, գլուզ «փոկ»ը, գլուզքավորական խմբակը և վերջապես գլուզխորհուրդը, նկատելով այս կամ այն կարիքը, կարող են առաջարել նրանց բավարարման համար, ինքնահար-կման միջոցը։ Ինքնահարկումի կիրարկման հարցը լուծելու հա-մար անպայմանորեն հրավիրվում և գլուզացիների ընդհանուր ժողով, վորտեղ վորոշվում և այդ հարցը։ Ժողովին մասնակցում են տվյալ գլուզի այն քաղաքացիները վորոնք ովտվում են ընտ-րողական իրավունքներով։ Ընդհանուր ժողովը համարվում և ո-վրնական յեթե այդ ժողովում ներկա լին տվյալ գլուզի ընտրող-ների ընդհանուր քանակի, վոչ պակաս կեսից։

Յեթե ինքնահարկման հարցի առթիվ նշանակված առաջին ընդհանուր ժողովին մասնակցում են ընդհանուր ընտրողների կեսից պակաս, հրավիրիում և յերկրորդ ժողովը վորտեղ ինքնա-հարկման հարցեր լուծելու համար պահանջվում և վորպեսզի ներ-կա լինի, ընտրողական իրավունք ունեցող քաղաքացիների ընդ-հանուր թվի առնվազն, մի յերորդ մասը։

Յեթե ինքնահարկումը առաջարվում է 2, կամ ավելի հա-րեան գլուզերի կարիքները հոգալու համար, (որինակ գետանց-ների կամ ճանապարհների կառուցում ու վերանորոգում) այդ գեպքերում անհրաժեշտ և վորպեսզի ինքնահարկման կիրարկելու հարցը լուծվի ինչպես այդ գլուզերի առանձին ընդհանուր ժո-ղովներում, նույնպես և նրանց միացյալ, շահագրգուված բոլոր գլուզերի քաղաքացիների ընդհանուր ժողովում։ Այդպիսի ժողով-ներում նույնպես պահանջվում և վորպեսզի ներկա լինի առաջին ժողովում, ընդհանուր ընտրողների թվի վոչ պատկաս կեսը, իսկ յերկրորդ ժողովում վոշ պակաս մի յերորդ մասը։

Նման գեպքերում նախապատրաստական աշխատանքները կատարվում են շրջանային գործկոմի միջոցով։

Ինքնահարկման բոլոր տեսակի հարցերին վերաբերվող վո-րոշումները կայացվում են ընդհանուր ժողովներում ներկա յեղող-ների ձայների պարզ մեծամասնությամբ։

Ինքնահարկման հարցը մինչ ընդհանուր ժողով մտցնելը, գլուզխորհուրդը կազմում և մոտավոր նախահաշիվ այն կարիքի ծախսերի համար, վորը յենթադրվում և հոգալ ինքնահարկման միջոցով։ Նախահաշիվը կազմելու ժամանակ նյութերի և աշխա-տանքի գնահատումն, գլուզխորհուրդը կատարում և (ծախքերը կատարելու ժամանակաշրջանում) տվյալ վայրում գոյություն ու-նեցող գներով։ Այսպիսով, ընդհանուր ժողովի վորոշումների մեջ ցուց և տրվում, ա) ինքնահարկման նպատակը բ) ինքնահարկ-ման ձեզ (զրամական, բնամթերավին կամ անձնական աշխա-տանքի և կամ խառն) գ) ինքնահարկման ընդհանուր գումարը դ) ինքնահարկման մուծումների առավելագույն ժամանակամի-ջոցը։ Յեթե ինքնահարկումը սահմանվում և պարբերական մու-ծումների ձեզով, այդ գեպքում վորոշվում և նաև այն, թե ինչ ժամանակով և սահմանվում ինքնահարկումը, վորը համենայն գեպսչի կարող գերազանցել մեկ տարուց։ Հարկ յեղած գեպքում, ժամկետի յերկարացման մասին պետք ե ունենալ ընդհանուր ժո-ղովի համապատասխան վորոշում։

Որին ակ. ընդհանուր ժողովը վորոշում և. ա) վերանորո-գել գլուզպարոցը։ Վորոշման մեջ պետք ե ցուց տալ, շինարա-րական նյութերից վորոշնք պետք և ձեռք բերվեն դրամով և վո-րոնք բնական պարհակով (բնանյութերով), աշխատանքների վեր մասը պետք և կատարվի վարձու բանվորներով և վորը քաղա-քացիների անձնական աշխատանքի մասնակցությամբ բ) կառու-ցել գաշտավին ճանապարհը, բացառապես քաղաքացիների անձ-նական աշխատանքի միջոցով, գ) կամ թե, ընդհանուր ժողովը վորոշում և, գրադարանը կամ խրճիթ-ընթերցարանը լուսավորել պրամական ինքնահարկումի միջոցով։

Ընդհանուր ժողովում վորոշված միջոցների ընդհանուր գումարը (դրամական, բնական և աշխատանքային) չպետք ե գերազանցի կենտրոնացման կողմից կողմից սահմանած, ինքնահարկման

առավելագույն չափը: Ինքնահարկման բնապարհակալին և աշխատանքային մասերը վեր են ածվում դրամականի, տեղական գներով:

Որինակ. յենթագրենք ժողովը վորոշում և ընդարձակել դպրոցի շենքը, վորի համար, ի թիվս մյուս նյութերի հարկավոր և 100 փութ կիր (ազլու) և վորովետե գյուղից մոտ են գըտնվում կրահանքերը, ժողովը վորոշում և կիրը բերել բնապարհակալին կարգով: Յենթագրենք տվյալ շրջանում մեկ փութ կիրը գնահատվում և 50 կոպ., այս գեպքում, բերվող 100 փութ կիրը գնահատվում և 100 գ.×50 կ. = 50 բուրլի, (թեև փաստորեն այդ կիրը ձեռք և բերվում առանձ դրամի, բնապարհակալին կարգով): Կամ թե, յենթագրենք նույն կարիքի համար անհրաժեշտ և 100 բանուրական որ և մեկ բանվորական որը, այդ աշխատանքները կատարվելու ժամանակամիջոցում, գնահատվում և 1 ո. 20 կոպ., տվյալ դեպքում 100 բանվորական որը կարժենա 100×1 ո. 20 կ. = 120 ո. բացի 100 գ. կրից և 100 բանվորական որից, դպրոցի շենքի ընդարձակման համար, յենթագրենք անհրաժեշտ և ձեռք բերել նաև 500 ռուբլու արժողությամբ շինանյութեր:

Այսպիսով, այդ բոլորը վերածելով դրամի կստանանք.	
ա) 100 փութ կիր 50 կոպեկով	= 50 ո.
բ) 100 բանվ. որ 1-20 »	= 120 ո.
և գ) մասած նյութերի գնման համար	= 500 ո.
Ընդամենը	670 ո.

IV. ԺՈՂՈՎՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

Չպետք ե մոռանալ, վոր ինքնահարկումը կարելի և կիրարկել միայն այն գեպքում, յերբ ընդհանուր ժողովի վորոշումը արդեն հաստատված և շրջանային գործկոմի կողմից:

Այդ կարգը այ թե ինչի համար և անհրաժեշտ, կարող յեն պատճել գեպքեր, յերբ ընդհանուր ժողովը սահմանել և գյուղացիների կարողությունից բարձր ինքնահարկում, կամ թե ժողովը որինական չի յեղել, ժողովը որենքին հակառակ վորոշումներ և հանել և այն: Այս բոլոր գեպքերում ընդհանուր ժողովի վորոշումները հաստատելու ժամանակի շրջագործկոմը կը նկատի և

կը տա համապատասխան ուղղություն: Գլխավոր ուշագրությունը շրջգործկոմները պետք ե զարձնեն այն հանգամանքի վրա, վորպեսզի ինքնահարկման կիրարկման ժամանակ, անպայման հաշվի առնվի լուրաքանչյուր տնտեսության վճարունակությունը և ուղժը:

Հիմա, յերբ արդեն ծանոթ յենք ինքնահարկման սահմանման կարգի հետ, անհրաժեշտ և կանգ առնել նրա բաշխման կարգի վրա:

V. ՈՎԿ Ե ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆԸ.

Ինքնահարկումը տարածվում և գյուղի բոլոր քաղաքացիների վրա, անկախ նրանից, թե յենթարկված յեն նրանք միասնուղարկի կամ ուրիշ հարկերի թե վոչ, և կամ ազատված յեն այդպիսիներից թե վոչ: Բայց վերջին գեպքում պետք ե իմանալ վոր մյասպուղարկից ազատված գյուղացիական տնտեսությունները կարող յեն յենթարկվել ինքնահարկման ընդհանուր ժողովի վորոշմամբ, բայց վոչ ավել յերեք փայլ չափից:

Բացի գրանից, ինքնահարկման կարող յեն յենթարկվել նաև այն անձինք, վորոք թեև չեն զբաղվում գյուղատնտեսությամբ բայց մշտական ապրում յեն այդ գյուղում, անկախ նրանից թե շահագրգուված են արդյոք զբանք թե վոչ անձամբ այն ձեռնարկումների մեջ, վորոնց համար կիրարկում և ինքնահարկումը: Որինակ. առեւրականները, արհեստավորները և այլն:

VI. ՈՎԿ ԿԱՐՈՂ Ե ԱԶԱՏՎԵԼ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՅ.

Այն հարցը, թե տվյալ գյուղի բնակչությունից, վար քաղաքացիները կարող են ազատվել ինքնահարկմանը մասնակցելուց, վորոշում և ընդհանուր ժողովը: Տվյալ գյուղի ընդհանուր ժողովը, լավ իմանալով յուր գյուղի այն չքավոր ընտանիքներին, վորոնք անկարող են վճարել անգամ մեկ փայ, բոլորովին ազատում և այդպիսիներին: Բացի դրանից, գյուղում կարող յեն

գտնվել այնպիսի քաղաքացիներ, վորոնք բնակվում են ժամանակավորապես և բոլորովին չեն շահագրգոված ինքնահարկման միջոցով կատարվող աշխատանքներում, վորոնք վերաբերվում են զուտ տվյալ գյուղի կուլտուր-տնտեսական ու հասարակական կարիքներին: Այդպիսիներին պատկանում են բժիշկները, գյուղատնտեսները, ուսուցիչներ և այլն: Ինքնահարկումի պարտավորեցումն սրանց վրա տարածելը կիներ միանգամայն անտրդարձի: Այսպիսով, ընդհանուր ժողովը կարող է բոլորովին ազատել ինքնահարկմանը մասնակցելուց: ա) առանձին չքավորընչագուրկ գյուղացիական անտեսություններին բ) այն քաղաքացիներին, վորոնք գտնվում են պետական ծառայության մեջ և չզբաղվելով գյուղատնտեսությամբ անմիջական ոգուտ չեն ստանում այն ձեռնարկումից վորի իրագործման նպատակով կիրարկվում և ինքնահարկումը և գ) բանվորա-գյուղացիական կարմիր բանակում գտնվող այն զինվորական ծառայողներին վորոնք կոչված լին մշտական զինածառայության:

Ընդհանուր ժողովի վորոշման հիման վրա, գյուղխորհուրդը, գյուղփոկի և տվյալ գյուղի քաղաքացիների ներկայացուցիչների մասնակցությամբ (վերջինը ընտրվում է ընդհանուր ժողովում) կատարում է ընդհանուր գումարի բաշխում այն քաղաքացիների մեջ, վորոնք մասնակցում լին ինքնահարկմանը:

Այդ բաշխումն կատարվում է ընդհանուր ժողովի լեռորդ որից վոչ ուշ:

VII. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՓԱՅԵՐԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Նախքան ինքնահարկման բաշխում կատարելն, գյուղխորհուրդը վորոշում է, թե լուրաքանչյուր տնտեսությանը կամ քաղաքացուն, վորոնք մասնակցում լին ինքնահարկմանը, քանի փակ և հասնում, վորի համար հիմք է ընդունվում հետեւալը.

ա) Միասգյուղնարկ վճարող գյուղացիական տնտեսությունների համար, ինքնահարկման փայերի քանակը վորոշում է տվյալ տարում վճարվող միասգյուղնարկի գումարով, այսինքն—ընդունվում է, վոր մեկ փայը հավասար է վճարվող միասգյուղնարկի մեկ ոուրլուն, դուրս հանած բոլոր արտոնությունները և զի-

ջումները: Որին ակ. վորեւ գյուղում գտնվում է միասգյուղնարկի լինթարկվող 100 գյուղացիական տնտեսություն, վորոնցից, լինթարկվենք, հաշված և միասգյուղնարկ 800 ոուրլի: Յենթարկենք դրանցից մի քանիսին տված արտոնությունների և զիջումների ընդհանուր գումարը կազմում է 100 ռ.: Հետեւապես, փաստորեն վճարման լինթակա հարկի գումարը կ'կազմի 700 ռ. այսպիսով տվյալ գյուղի լինքնահարկման փայերի քանակը, միասգյուղնարկի լինթարկված տնտեսությունների համար, հավասար կինի լեռթ հարյուրի:

բ) Գյուղատնտեսությամբ չըբաղվող, գյուղում մշտական բնակվող քաղաքացիների համար, վորոնք իրենց առևտություն և արհեստներից ստացած լեկամուտների համար լինթարկվում լին պետական լեկամտահարկի, փայերի քանակը վորոշվում է հետեւալ ձեվով:

Վերցվում է հարկաթերթում նշանակված լեկամուտի գումարը, վորը վորոշված է ֆինանսական տեսչին կից արշարկանանաժողովի կողմից և այդ լեկամուտը ընդունելով վորպես հիմք, վորոշվում է միասգյուղնարկի գումարը համաձայն ընթացիք տարվա գրուքների:

Այդ ձևով հաշված միասգյուղնարկի գումարը, հավասար կ'լինի փայերի քանակին, հաշվի առնելով, վոր միասգյուղնարկի լուրաքանչյուր ոուրլին հավասար է ինքնահարկման մեկ փային:

Որին ակ. Քաղաքացի կիրակույանից, ֆինանսուչը վորոշել է վորպես առևտություն ստացած լեկամուտ, 1000 ոուրլի: Նրա ընտանիքը բաղկացած է 5 հոգուց: 1928-29 թ. միասգյուղնարկի գրուքներով հարկը հավասար կ'լինի 211 ոուրլու, այսինքն, այդ քաղաքացին ինքնահարկմանը կ'լինթարկվի 211 փայի չափով:

գ) Գյուղում մշտական ապրող այն քաղաքացիների համար, վորոնք չըբաղվելով գյուղատնտեսությամբ, ապրում լին առևտություն կամ արհեստից ստացած լեկամուտներով բայց լեկամտահարկի չեն լինթարկված, ինքնահարկման փայերի քանակը վորոշվում է հետեւալ ձեվով:

Նախ և առաջ գյուղխորհուրդը գյուղի ներկայացուցչի մասնակցությամբ, (վորը ընտրվում է ընդհանուր ժողովում) եկապերտավին ձեզով վորոշում ե արդարիստների յեկամուտները այն տվյալների հիման վրա, վորոնք գտնվում յեն գյուղխորհորդում, հաճախաժողովի մոտ, և կամ ստացվում են այս կամ այն բանին մացքաղաքացիներից ու նաև հարկատուին հարց ու փորձ անելու միջոցով։ Այդ ձեզով վորոշված յեկամտի գումարից հաշվում ե միասգուղհարկը, վորին համեմատ և վորոշում ե ինքնահարկի փայերի քանակը ինչպես նախորդ գեպքերում։

գ) Գյուղում մշտական բնակվող այն քաղաքացիների համար, վորոնք ապրում յեն միմիայն աշխատավարձից ստացած յեկամուտներով, փայերի քանակը վորոշում ե հետևյալ ձեզով.

1. Այն քաղաքացիների համար, վորոնք յենթարկվում յեն յեկամտահարկի, ընդունվում է ֆինտեսչի կողմից վորոշած յեկամտի գումարը, դրանից վերցնվում է 15%, ու ստացված գումարից հաշվում ե միասգուղհարկը և փայերի քանակը վորոշում ե «բ» կետում ցուց տված կարգով։

Որինակ. Գյուղում մշտական բնակվում և գյուղկոռպերատիվի ծառայուղը, վորը յենթարկվում ե յեկամտահարկի։ Ֆինտեսուչը գրա տարեկան ամբողջ յեկամուտը վորոշել է 1200 ռ. այդ յեկամտից—վերցվում է 15%-ը, այն է 180 ռուբին, վորից և հաշվում ե միասգուղհարկը։ Տվյալ գեպքում յեթե յենթարկենք վոր, այդ ծառայողի ընաանիքը բաղկացած է 4 շնչից, միասգուղհարկը հավասար կ'ինի 6 ռ. 25 կոպ. այսինքն, ինքնահարկմանը այդ ծառայողը պետք է յենթարկվի 6 փայի չափով։

Մի ուրիշ որինակ. նույն գյուղում բնակվում և ուսուցիչ վորը յեկամտահարկ չի վճարում, այս գեպքում գյուղխորհուրդը, գյուղփոկի և գյուղի ներկայացուցիչների մասնակցությամբ, յենթարկենք վորոշում է 500 ռուբի, վորպես ուսուցչի տարեկան յեկամուտը։ Դրանից վերցնվում է միայն 15%-ը այն է 75 ռ., վորից և հաշվում ե միասգուղհարկ, յեթե յենթարկենք վոր նրա ընտանիքը բաղկացած է 2 շնչից, միասգուղհարկը հավասար կ'ինի ընդամենը 1 ռ. 70 կ., այսինքն այդ ուսուցիչը ինքնահարկմանը կ'մասնակցի 2 փայի չափով։

Մանոթություն. Միասգուղհարկի հաշվման ժամանակ 50 կոպեկից բարձր գումարը ընդունվում է վորպես 1 ռուբլի, իսկ 50 կոպ. ցածր գումարը հաշվի չի առնվում։

Անաթե ինչպես ե վորոշվում, ինքնահարկման փայերի չափը այն տնտեսություններից և քաղաքացիներից, վորոնք մշտապես ապրում յեն տվյալ գուղղում։

Ավելի պարզ պատկերացնելու համար, վերցնենք ամբողջ գյուղի որինակը, թե ինչպես ե վորոշվում փայերի քանակը։

«Ֆլան» գյուղում կա յենթարկենք 100 գյուղացիական տընտեսություններ, վորոնք վճարում յեն միասգուղհարկ 700 ռ. և 40 տնտեսություն, վորոնք ազատված յեն միասգուղհարկից, կա 1 քաղաքացի՝ առևտրական, գյուղատնտեսություն չունեցող, վորի յեկամտից միասգուղհարկ հաշված է 211 ռուբլի, 1 կոպ. ծառայող, վորի յեկամտից հաշված միասգուղհարկը հավասար է 6 ռ. 25 կոպ., 1 արհեստավոր, վորի յեկամտից միասգուղհարկը հաշված է 20 ռ. և 1 ռուսուցիչ, վորից միասգուղհարկը վորոշված է 1 ռ. 70 կոպ. միասգուղհարկի ընդհանուր գումարը, ավել գյուղում հավասար կլինի. 700 ռ. + 211 ռ. + 20 ռ. + 6 ռ. + 2 ռուբլի = 939 ռուբլու, վորը նշանակում է, վոր ինքնահարկման ընդհանուր գումարի բաշխման համար, տվյալ գյուղում կա 939 փայ։ Բացի դրանից այդ գյուղում կա յետ 40 գյուղացիական տնտեսություն, վորոնք ազատված յեն միասգուղհարկից։ Ընդհանուր ժողովը յենթարկենք վորոշել է, բոլորովին ազատել ինքնահարկումից, այդ 40-ից 10 տնտեսություն, իսկ մնացածներին յենթարկել ինքնահարկմանը հետևյալ չափով։ 10 տնտեսություն մեկական փայով, 10 տնտեսություն 2-ական փայով և 10 տնտեսությանը յերեքական փայով, ուրեմն այդ 30 տնտեսություններից ընդամենը, $10 + 50 + 30 = 60$ փայ։

Այդպիսով, տվյալ գյուղում ինքնահարկման գումարների բաշխման համար կլինի $939 + 60 = 999$ փայ։

Պարզ պատկերացնելով ինքնահարման փայերի վորոշման կարգը, հիմա նայենք, թե ինչպես ե կատարվում գումարների

բաշխումը, առանձին տնտեսությունների ու քաղաքացիների մեջ վորոնք մասնակցում լին ինքնահարկմանը:

VIII. ԻՆՔԱՅԱՐԿՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Ինչպես վերեկում ասվեց, ինքնահարկման գումարների բաշխումը, կատարվում է առանձին տնտեսությունների ու քաղաքացիների մեջ, ըստ փայերի քանակի, գուղլսորհրդի (մասնակցությամբ գյուղիոկի և ընդանուր ժողովում ընտրված գյուղացիների ներկայացուցիչների) կողմից: Վորպեազի իմանալ թե ինքնահարկման գումարից վորքան և ընկնում յուրաքանչյուր փային, հարկավոր ե. ընդհանուր ժողովի կողմից վորոշված ինքնահարկման ընդհանուր գումարը, բաժանել տվյալ գյուղի փայերի ընդհանուր քանակի վրա:

Որինակ. Յենթաղընք վորեե գյուղում, ընդհանուր ժողովը գորոշել է վերանորոգել դպրոցը, դրամական ինքնահարկումի միջոցով: Այդ վերանորոգումն գնահատված է 1000 ռուբլի իսկ գյուղի ընդհանուր փայերի քանակը հավասար է 2500-ի, վորպեսզի իմանանք թե ամեն մի փային վորքան և հասնում, 1000 ռ. բաժանվում է 2500-ի վրա և ստացված 40 կոպեկը հանդիսանում է ամեն մի փայի արժեքը: Այնուհետև յուրաքանչյուր տնտեսությունից կամ քաղաքացուց ինքնահարկման վճարումների չափը վորոշելու համար, մեկ փայի արժեքը բաղմապատկում և նրանց փայերի քանակի վրա: Որինակ. Յեթե տվյալ տնտեսությունից հասանելիք ինքնահարկման վճարը հավասար կ'լինի 12 × 4 ռ. = 4 ռ. 80 կոպ.:

Կարող լին պատահել դեպքեր, յերբ ընդհանուր ժողովը վորոշում է այս կամ այն կարիքը բավարարել ինքնահարկման բնապարհակային կարգով: Յենթաղընք վորոշվում է գաշտապահին տալ 100 փութ ցորեն: Այս դեպքում գյուղիորհուրդը կատարում է վոչ թե ցորենի բաշխում, այլ 100 Փ. ցորենը գընապատում է տեղական գներով, վորոնք գոյություն ունեն ինքնահարկումը կատարելու ժամանակ և այդպիսով բնապարհակը վեր է ածում զրամի: Յեթե ընդունենք, վոր ցորենի մեկ փթի գինը հավասար է 2 ռ., 100 Փ. ցորենը կ'գնահատվի 100 Փ. × 2

ռուբ. = 200 ռուբ. հիշալ գումարի բաշխումը ինքնահարկմանը մասնակցող գյուղացիական տնտեսությունների ու քաղաքացիների մեջ, կատարվում է վերեկում նշված կարգով: բայց վճարումը կարող է կատարվել և զրամով և բնապարհակով:

Յեթե ինքնահարկումը կատարվում է անձնական աշխատանքի մասնակցությամբ, որինակ. վորոշվում է կարգավորել գաշտապին ճանապարհը, (կամ նորը կառուցել) վորի համար անհրաժեշտ է 200 բանվորական որ, այս դեպքում, նույնպես աշխատանքները գնահատվում լին զրամով վորից հետո և կատարվում է ինքնահարկման բաշխումը: Աշխատանքները կատարելու պահին, (ժամանակ) լինթաղընք բանվորական որը գնահատվում է. 1 ռուբ., ինքնահարկման ընդհանուր գումարը հավասար կ'լինի 200 × 2 ռ. = 200 ռուբլու, վորը և լինթակա և բաշխման: Նման դեպքում անհրաժեշտ է նախաքան աշխատանքներին անցնելը վայրոք վորոշել թե ովքեր են ցանկանում զրամով վճարել, և ովքեր աշխատանքով, վորպեսզի գյուղիորհուրդը պարզի, թե վորքան բանվորական ուժ պետք է վարձել:

Վերջապես կարող են պատահել դեպքեր, յերբ ինքնահարկումը կատարվում է խառն ձեվով այլինքն. և զրամով և բնական պարհակով և անձնական աշխատանքով:

Որինակ. Գյուղը, ընդհանուր ժողովում վորոշում է վերանորոգել դպրոցը: Գյուղիորհուրդի ներկայացրած, և ժողովում հաստատած նախահաշվով, յենթաղընք անհրաժեշտ է ընդամենը 1000 ռուբլի: Բայց ժողովը վորոշում է, վոր վերանորոգմանը անհրաժեշտ 100 բանվորական ուժը կարելի է բավարարել անձնական աշխատանքի միջոցով, իսկ կիրն ու ավագը վորպես գյուղից մոտ գտնվող, նույնպես կարելի է բերել առանձ վճարի, սեփական սալլերով:

Ծնդունենք, վոր 100 բանվ. որը—գնահատվում է 100 ռ., իսկ վերանորոգմանը անհրաժեշտ 10 սալլ կիրն ու ավագը, (լուրաբանչուրը գնահատելով 5 ռ.), կազմում է 50 ռուբլի, և վոր մնացած 850 ռ. անհրաժեշտ է զանազան նյութեր գնելու և վարչական պետներին վարձատրելու համար, կ'հաշնակի վոր բաշխման մեջներ թակա և ընդամենը 1000 ռ. Այս զրամարը գյուղիորհուրդը



(ներկալացուցիչների մասնակցությամբ) բաշխում և ինքնահարկ-
մանը մասնակցողների մեջ ըստ նրանց փայերի քանակի, և վա-
ղորոք պարզում ե թե ովքեր ինչ ձեվով են մասնակցում ինք-
նահարկմանը: Այդ հանգամանքները գլուղխորհուրդը դիմավորա-
պես պարզում ե այն նպատակով, վորպեսզի մի կողմից աշխա-
տանքները կատարվեն առանց ձգձգվելու և կազմակերպված իսկ
մյուս կողմից չքավորներին և միջակներին հնարավորություն
տալ ինքնահարկմանը մասնակցելու իրենց նպատակահարմար
ձեվով:

IX. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հնդհանուր ժողովում ինքնահարկում կատարելու հարցը
լուծելու հետ միաժամանակ վորոշվում ե նաևել վճարման ժամ-
կետները: պետք ե հիշել վոր մեկ ժամկետ նշանակել չի կարելի,
անհրաժեշտ և սահմանել վճարման համար 2 ժամկետ, (նվազ)
գանձելով յուրաքանչուրից հասանելիք վճարը 2 հավասար մա-
սերով: Վճարման առաջին (նվազը) ժամկետը պետք ե նշանակել
վոչ շուրջ քան ընդհանուր ժաղովի յեռթէբրորդ որը, բայց վոչ
ուշ քան նույն ժողովից մեկ ամիս անց: Յերկրորդ ժամկետը
նշանակվում ե առաջին ժամկետից մեկ ամիս հետո: Այդ կարգը
սահմանվում ե նրա համար, վորպեսզի գլուղացիությունը հեշ-
տությամբ կատարի յուր վրա վերցրած պարտականություննե-
րը: Ժամկետները նշանակելու ժամանակ անհրաժեշտ և հաշվի
առնել այն ժամանակաշրջանը, յերբ գլուղացիությունը իրացման
ե յնթարկում յուր գլուղատնեսական մթերքները, այսինքն
պետք ե աշխատել վորպեսզի ժամկետները նշանակվեն գլուղա-
ցիության վճարունակության շրջանում: (Կամ վոչ գլուղատնե-
սական վաստակներից յեկամուտ ստանալու շրջանում): Պարզ ե
վոր, այդ բոլոր խնդիրներում հաշվի են առնվում մեծամասնու-
թյան շահերը:

Ինչ վերաբերվում ե ինքնահարկման անձնական աշխա-
տանքի մասնակցության ձեվին, այսպիսին անհրաժեշտ և նշա-
նակել դաշտավեն աշխատանքներից ազատ ժամանակ:

Ինչպես ե իրավեկ գաղ ձվում գլուղի բնակչու-
թյունը ինքնահարկմանը վերաբեր վոր վորոշում-
ների մաս ին:

Վերեսում հիշված կարգով ինքնահարկման գումարները
մասնակցողների մեջ բաշխելուց հետո գլուղխորհուրդը ընդհա-
նուր ժողովի վորոշումից 3 որվա ընթացքում, հաստատում ե
բաշխումը և կազմում բոլոր հարկատուների անվանական ցուցա-
կը, վորտեղ մանրամասորեն ցուց ե արվում փայերի քանակը,
վճարման յինթակա գումարը և այլն: Այդ ցուցակի մեկ որինակը
կախ և արվում (փակցվում ե) գլուղխորհուրդի շնչքում, վորպեսզի
ինքնահարկմանը մասնակցողներից յուրաքանչյուրը կարողանա-
ծանոթանալ գլուղխորհուրդի կողմից կատարած բաշխման արդյու-
նքների հետ: Բացի դրանից, գլուղխորհուրդը պարտավոր ե իրա-
վեկ գարձնելու գլուղկատարածուների միջոցով բոլոր հարկատու-
ներին, նրանցից հասանելիք վճարությունների և ժամկետների մա-
սսին: Ցուցակի 2-րդ որինակը պահպանվում ե գլուղխորհուրդի գործերի
մեջ:

X. ԿԱՏԱՐԱԾ ԲԱՇԽՈՒՄԻ ԲՈՂՈՔԱՐԿԱՆ ԿԱՐԳԸ

Ինքնահարկմանը մասնակցողներից յուրաքանչյուրը, իրա-
վունք ունի բոլոք անելու գլուղխորհուրդին, թե ընդհանուր ժողո-
վի վորոշումների մասին, և թե ինքնահարկման բաշխման ու
փայերի քանակների վերաբերյալ: Գլուղխորհուրդը հարկատուի
պահանջմամբ պարտավոր ե հայտնել այն բոլոր տվյալները, վո-
րոնց հիման վրա կատարված և փայերի քանակի վորոշումը և
հարկի բաշխումը: Գանգատները կարող յեն տրվել բաշխման
արդյունքները հայտարարելուց 7 որվա ընթացքում: Այդ յոոթ օրը
անցնելուց հետո, գլուղխորհուրդը ուղղում ե (ուղարկում ե) շըրջ-
գործկոմին: ընդհանուր ժողովի համապատասխան վորոշումը,
իրեն կատարած ինքնահարկման բաշխումը և ինքնահարկման
վերաբերյալ տվյալ բոլոր գանգատները յուր համապատասխան
յեղբակացությամբ:

XI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

Երջգործկոմը ստանալով գյուղխորհրդից ինքնահարկմանը վերաբերվող բոլոր նյութերը, պարտավոր և 2 շաբաթվա ընթացում մանրակրկիտ նայել. ընդհանուր ժողովի վորոշումների որինականությունը, գյուղխորհրդի կատարած բաշխման ճշտությունը և դրանց հետ ներկայացրած բոլոր գանգատները:

Երջգործկոմը, ինքնահարկումը կատարելու ընդհանուր ժողովի վորոշումը կարող ե բեկանել (չհաստատել).

1) Յեթե քաղաքացիների ընդհանուր ժողովը, վորը վորոշել ե ինքնահարկման կիրարկումը, յեղել ե անորինական, շնորհիվ մասնակցողների անորինական թվին,

2) Յեթե ձեռնարկումը, վորի իրազործման համար կատարվում ե ինքնահարկում, չի նախատեսնված տվյալ Հանրապետության կենտրոնակոմի հաստատած ցուցակով և

3) Յեթե նույն կենտրոնակոմի կողմից սահմանված ինքնահարկման առավելագույն տոկոսային չափը բարձրացրած և ընդհանուր ժողովի կողմից:

Այն գեղքերում, յերբ շրջգործկոմը յերևան ե հանում ընդհանուր ժողովի վորոշումների անորինականությունը, այդ առթիվ նա հայտնում ե գյուղխորհրդին, վերադարձնելով բոլոր նյութերը, չ'ըննելով հարկի բաշխման ճշտությունը և ներկայացրած գանգատները: Ընդհանուր ժողովների վորոշումների որինականությունը պարզելուց հետո, շրջգործկոմը անպայմանորեն ստուգում ե գյուղխորհրդի կողմից կատարած բաշխման ճշտությունը: Դրա հետ միասին, շրջգործկոմը միաժամանակ քննում է բոլոր տված գանգատները, հանելով յուրաքանչյուր գանգատի համար առանձին վորոշում: Այն գեղքերում, յերբ շրջգործկոմը պարզում ե, վոր գյուղխորհրդի կատարած բաշխումը սխալ ե, (անգամ յեթե այդ առթիվ վոչ մի գանգատ չի ներկայացված), նա պարտավոր ե բաշխումը կամ բոլորովին բեկանել, կամ թե չե, պարտավոր ե կատարել նրա մեջ անհրաժեշտ ուղղումներ: Նման գեղքերում շրջգործկոմը անմիջապես հայտնում է այդ առ-

թիվ գյուղխորհրդին, վորը իր հերթին պարտավոր և անմիջապես մտցնել անհրաժեշտ (փոփոխումներ) ուղղումներ, իրեն կատարած բաշխման աշխատանքների մեջ:

Ամեն մի տված գանգատի վերաբերյալ հանած վորոշումը, շրջգործկոմը հայտնում է գյուղխորհրդի միջոցով հարկատուին, ցուցը տալով պատճառները, յեթե բողոքը չի բավարարված:

Երջգործկոմի վորոշումը կարելի ե բողոքարկել գավործկոմին, յեթե գանգատավորը դժոն և մնում առաջինի վորոշումից:

Միայն պետք է իմանալ վոր գանգատ տալը չի կանգնեցնում ինքնահարկման կիրարկումը և չի դադարեցնում գանգատավորից հասանելիք վճարումների մուծումն:

Յեթե գավործկոմի կողմից տված գանգատը բավարարվի հարկը վճարելուց հետո, այն ժամանակ ինքնահարկման հաշվին ավել մուծած գումարները չենթակա չեն կամ վերադարձման, կամ ի հաշվով այլ ինքնահարկման վճարումների հաշվեառման:

Ինքնահարկմանը վերաբերվող ընդհանուր ժողովի վորոշումները և գյուղխորհրդի կատարած բաշխումը համարվում չեն հաստատված, յեթե շրջգործկոմը գյուղխորհրդից ստանալուց յերկուշաբթվա ընթացքում վերջինին չը հայտնի բեկանման, կամ անհրաժեշտ ուղղումներ կատարելու մասին և գյուղխորհուրդը անցնում է ինքնահարկման կիրարկումը կյանքում:

XII. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.

Ինքնահարկումին յուրաքանչյուր մասնակցողը պարտավոր է (իր միջոցով) ընդհանուր ժողովում վորոշված ժամկետներին մուծել գյուղխորհրդի կողմից կատարած բաշխման ճշտությունը: Դրա հետ միասին, շրջգործկոմը միաժամանակ քննում է լուրջ նշանակություն, ձեռնարկած աշխատանքները կյանքում իրագործելու տեսակետից: Ամեն մի ձգձգում, կամ նշանակված ժամկետին վճարելուց խուսափելը կ'հասցնի այն գրության, յերբ գյուղի կարիքը, վորի բավարարման համար կիրարկում է ինքնահարկում, կ'մնա անկատար, նշանակված ժամանակին չի ավարտվի, կամ հետագայում անհամեմատ թանգ կ'նստի:

Ահա այդ պատճառներից յելնելով, որինքով նախատեսնված է, վոր նշանակված ժամկետներին չ'մուծված վճարումները անցնում յեն հետույթների և բռնագանձվում—ստիտողական կարգով գուղխորհրդի միջոցով, (վորպես այլ հարկերի հետույթներ):

ԽIII ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ինքնահարկման գծով մուծվող բոլոր գումարները, զյուղաբորհուրդը պարտավոր է անմիջապես հանձնել մոտակա խնայողական դրամարկղը, իր ընթացիկ հաշվին:

Բնա-պարհակալին ինքնահարկում սահմանելու դեպքում, զյուղխորհուրդը—վաղորոք հաշվի առնել վ այդ, նախատեսնում է հավաքվող մթերքների պահպանման կարգը, վորի համար զյուղխորհուրդը կամ պայմանագործում է (այդ նպատակով) տեղական կոռպերացիալի հետ, կամ ինքը պատրաստում է նույն նպատակի համար մի հարմար չենք:

Ինքնահարկման կարգով հավաքվող միջոցները պետք է ծախսվեն բացառապես այն նպատակներին, վորոնք ցուց են առված ընդհանուր ժողովի վորոշումների մեջ, և վոչ մի դեպքում զյուղխորհուրդը չի կարող ծախսել այդ գումարները մի վորեւ այլ կարիքների վրա, մանավանդ իր վարչական կարիքների բավարարման համար:

Հիշալ կարգի խախտումը միջոցների ծախսման վերաբերյալ, հետապնդվում է քրեական կարգով, և մեղավորները յենթարկվում են դատապարտության:

Յեթե այս կամ այն պատճառով ինքնահարկման գծով հավաքված գումարները չեն կարող ոգտագործվել ընդհանուր ժողովի նշած նպատակին, զյուղխորհուրդը այդ առթիվ հայտնում է ընդհանուր ժողովին, վորը նոր վորոշում է հանում. կամ այդ գումարները այլ կուլտուր-տնտեսական կարիքների վրա ծախսելու, կամ թե չե, հավաքած միջոցները հետ վերադարձնելու մասին:

Կարող է պատահել և այնպիսի դրություն, յերբ ընդհանուր ժողովի կողմից ձեռնարկած նպատակները (ձեռնարկումները)

կլանքում իրագործելու ժամանակ պարզվի, վոր հավաքած միջոցները չեն բավարարում: Այդ դեպքում զյուղխորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողով, վորտեղ և հանգում է համապատասխան վորոշում լրացնեցիչ ինքնահարկման մասին:

Ընդհանուր ժողովի վորոշումները լրացնեցիչ ինքնահարկման մասին, նույնպես յենթակա յեն շրջգործկոմի համապատասխան հաստատության:

ԽIV. ԳՅՈՒՂԻՌՉՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ինքնահարկումը հանդիսանում է ընդհանուր ժողովի ցանկության կամավոր արտ սհայտառթյունը:

Ինքնահարկման որենքը, սահմանելով զյուղական բնակչության ինքնահարկման ընդհանուր սկզբունքները, միաժամանակ սահմանում է բնակչության սոցիալական առանձին խավերի մեջ հարկի ծանրության բաժանման կարգը:

Ինքնահարկման հետ կապված բոլոր գործնական աշխատանքները, կանքում կիրարկելու ժամանակ զրվում է հենց իրենց, զյուղացիների վրա, հանձինս իրենց կողմից ընտրված իշխանության մարմին—զյուղխորհրդի:

Վորովինետև բացի զյուղխորհրդից վոչ վոք այնպես լավ ծանոթ չե զյուղի կարիքներին և նրանց բավարարման հնարավություններին, ուստի հենց այդ պատճառով, ինքնահարկման բոլոր նախապատրաստական աշխատանքները և իրագործվող ձեռնարկումները կյանքում կիրարկելը դրվում է—զյուղխորհրդի վրա:

Այդ բոլորը զյուղխորհրդի առաջ գնում են չափազանց լուրջ խնդիրներ, վորոնց հաջող լուծումից կախված է ինքնահարկման անմիջական արդյունքները:

Ի՞նչ պարտականություններ ե վրում զյուղխորհրդի վրա: Գյուղխորհուրդը իմանալը զյուղի բոլոր կարիքները, և այն, թե ընթացիկ տարում վրանցից վորոնք և ի՞նչ չափով են բավարարվելու բարձրացնելին կարգով, կազմում և ցուցակ այն բոլոր հասարակական և կուլտուր-կրթական կարիքների, վորոնք չեն բավարարվելու բարձրացնելի միջոցներով և ըստ կարելորության դասա-

վորում և նրանց կատարման հերթի: Ձեռնարկվող յուրաքանչյուր աշխատանքի համար, գյուղխորհուրդը կազմում և մանրամասն նախահաշիվ այն ծախքերի համար, վորոնք կատված են տվյալ ձեռնարկումի կիրարկման հետ: Ապա այդ նախահաշիվը դրվում է ընդհանուր ժողովում ի քննություն:

Գյուղի բոլոր կարիքների ցուցակը անհրաժեշտ և վաղորոք կազմել վրապեսզի ինքնահարկման կարգով հավաքվող գումարները, վորոնց չափը որենքով սահմանափակված է, չ'ծախսվին գյուղի յերկրորդական նշանակություն ունեցող կարիքների վրա: Գյուղխորհուրդը պետք է նկատի ունենա, վոր կազմած կարիքների ցուցակով բոլոր ձեռնարկումների ընդհանուր արժողությանը, չ'պետք ե գերազանցի այն չափը, վորի սահմանում որենքը թույլատրում է ինքնահարկում կատարել տվյալ գյուղում: Մյուս կողմից հիշալ կարգը հնարավորություն կ'տա խուսափելու այնպիսի դրությունից, իերբ աշխատանքների կեսին պարզվում է, վոր հավաքված գումարները անբավարար են:

Այսպիսով գյուղխորհուրդը, ընդհանուր ժողովի կողմից ինքնահարկումը ընդունելուց հետո պարտավոր է:

1. Վորոշել ինքնահարկման փայերի քանակը,

2. Կատարել համապատասխան բաշխում ինքնահարկմանը մասնակցողների մեջ:

3. Փակցնել ինքնահարկմանը մասնակցողների անվանական ցուցակը, ցուց տալով յուրաքանչյուր մասնակցողի վճարումների չափը:

4. Իրավեկ դարձնել գյուղկատարածուների միջոցով, ընդհանուր ժողովի կողմից ընդունված ինքնահարկման դումարը մասնակցողների մեջ բաշխման մասին:

5. Ընդունել գյուղացիներից գանգատներ և դիմումներ ինքնահարկման առթիվ:

6. Նշանակված ժամկետին ուղարկել շրջործկոմին ի հաստատություն, ինքնահարկմանը վերաբերվող բոլոր գործերը (ընդհանուր ժողովի արձանագրությունները, բողոքները, բաշխումը և այլն):

Շրջգործկոմի կողմից ինքնահարկումը հաստատվելուց հետո, գյուղխորհուրդը անցնում է գործնականորեն կյանքում կիրարկելուն. ընդունում է ինքնահարկման վճարումները, պահում է հավաքած միջոցները, մանրամասն հաշվեառման և առնում ստացվող բոլոր միջոցները և կատարում է անհրաժեշտ ծախսերը: Գյուղխորհուրդը ընդհանուր ժողովի վրոշմանը և գործող որենքների հիման վրա, կնքում է անհրաժեշտ պայմանագրեր, կատարում է շինարարական նյութերի գնումներ և նրանց փոխադրումը, պահում է խիստ հաշվեառում ձեռք բերված և ստացված բոլոր շինանյութերի, ապահովում է կամ կազմակերպում տեխնիքական հակողություն կատարվող աշխատանքների վրա, ինքնահարկմանը մասնակցողների մեջ բաժանում և աշխատանքները, և յերբ ինքնահարկումը կատարվում է անձնական աշխատանքով, հաշվեառման է յենթարկում աշխատանքի յեկողներին ու նրանց կատարած աշխատանքի չափը և այլն:

Գյուղխորհուրդը կառավարում է ինքնահարկման գծով ձեռք բերվող ամրող ունեցվածքը, և նույն կարգով կազմվող հասարական գրամագլուխները.

Դերջապես գյուղխորհուրդը, վորպես մի մարմին վորը կյանքում կիրարկում և ընդհանուր ժողովի վրոշումները, պարտավոր է հաշիվ տալ ընդհանուր ժողովին, վերաբերություն հանձնաժողովին և շրջգործկոմին, ինքնահարկման միջոցով հավաքված գումարների ծախսման և աշխատանքի մասնակցության միջոցով կատարած գործերի մասին:

XV. ԳՅՈՒՂԵՐՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁԱԺՈՂՈՎ-ՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացի շրջգործկոմների կողմից որենքով նախատեսնված ստուգումն, ինքնահարկման գծով հավաքված միջոցների ձիւտ ծախսումն պարտավոր յեն ստուգել նաև գյուղխորհուրդներին կեց գոլություն ունեցող վերաբերությունները:

Վերաբերություն հանձնաժողովները պարտավոր յեն հսկել ինքնահարկման միջոցների ձիւտ և ժամանակին հավաքվելուն: Հսկել գործեազի հավաքվող դումարները պահպեն ինչպես հարկն և և

մեծ գումարներով չ'մնան գուղխորհրդի առանձին անդամների ձեռքերում: Նրանք հսկում յեն վորպեսզի հավաքված գումարները բացառապես ծախսվեն ընդհանուր ժողովի կողմից սահմանած կարիքներին, և վոչ մի դեպքում չ'թուլլատրել ծախսելու վարչական կարիքների համար:

Վերսուուգիչ հանձնաժողովները մասնակցում յեն. աշխատանքների կատարման և շինանյութերի գնման վերաբերյալ պայմանագրեր կնքելուն և ապա մասնակցում յեն այդ նյութերը ընդունելու ժամանակ: Վերջապես, վերսուուգիչ հանձնաժողովները մասնակցում յեն կատարված աշխատանքների ընդունելուն:

Ինքնահարկման կիրարկելու ընթացքում բոլոր նկատած թերութ. մասին վերսուուգիչ հանձնաժողովները զեկուցում յեն հերթական ընդհանուր ժողովում: Յերեվան հանած խոշոր սխալների և շեղումների դեպքում, վերսուուգիչ հանձնաժողովը հարց և բարձրացնում գյուղխորհրդի առաջ արտակարգ ընդհանուր ժողով հրավիրելու նպատակով: Ինքնահարկման բոլոր աշխատանքները ավարտելուց հետո, վերսուուգիչ հանձնաժողովը կատարում է ընդհանուր ստուգում և գյուղխորհրդի կատարած աշխատանքների արդյունքների ու գնահատականի մասին դեկուցում և ընդհանուր ժողովին:

XVI. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինքնահարկման որենքը, շրջգործկոմիների առաջ նույնպես դնում է չափազանց լուրջ և պատասխանատու խնդիրներ:

Այն դեպքերում, յերբ ինքնահարկումը կատարվում է միքանի հարեւան գուղքերի կողմից, նրանց վորեն ընդհանուր կուտուրա-տնտեսական կարիքները բավարարելու նպատակով, (ճանապարհ, գալրոց, հիվանդանոց, կամուրջ և այլն) շրջգործկոմների վրա դրվում է ձիշտ նույն պարտականությունները, վորոնք ինքնահարկման կիրարկելու ժամանակ նախատեսնված յեն գյուղխորհրդների վերաբերյալ: Այսինքն, նման դեպքում շրջգործկոմները հանդիսանում են վոչ միայն դեկավարողի, այլ

և անմիջականորեն այդ բոլոր ձեռնարկումները կրանքում կիրարկողի գերում:

Մնացած բոլոր գեպքերում շրջգործկոմի գերը կայանում եղուղղիուրդների աշխատանքներին հսկելու և նրանց դեկավարելու մեջ: Այն և.

Շրջգործկոմը նայում է հաստատում և ընդհանուր ժողովի վորոշումները, ստուգում և գյուղխորհրդի կողմից կատարած ինքնահարկման բաշխումը, քննության և ասնում ինքնահարկման վերաբերյալ տված բոլոր գանգատներն ու դիմումները և նրանց լուրաքանչչուրի վերաբերյալ հանում և հատուկ վորոշում:

Վերջիշխալ բոլոր աշխատանքները շրջգործկոմը պարտավոր է կատարել (ըստ ժողովի վորոշումների, զանգատների և հարկի բաշխումի ստուգումը) որենքով սահմանված ժամկետում: Այն և յեթի որենքով նախատեսնված յերկու շաբաթյա ժամկետում շրջգործկոմը չ'հայտնի գյուղխորհրդին նրան ներկայացրած ընդհանուր ժողովի վորոշման, ինքնահարկման նախահաշվի և բաշխման—ըեկանման կամ փոփոխման մասին, վորոշումները և նախահաշիվը ինչպես և ինքնահարկման բաշխումը համարվում յեն հաստատված ու անմիջապես ստանում որինական ուժ:

Շրջգործկոմները խիստ հսկում յեն վորպեսզի գյուղխորհրդներները նախատեսնված ժամկետներում և սահմանված ձևերով ներկայացնեն հաշվետվություն ինքնահարկման աշխատանքների մասին, և իր հերթին արդարիները ներկայացնում յեն գավգործկոմին:

Շրջգործկոմները ընդհանրապես իրագործում յեն, ինքնահարկման գծով կատարվող գյուղխորհրդի բոլոր աշխատանքների վրա, ընդհանուր հսկողությունը:

XVII. ԻՆՉ ԴԵՊՔՈՒՄ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ

Ինչպես վերև ասեցինք, ընդհանուր ժողովի վորոշումը ինքնահարկում կատարելու մասին պարտագիր և տվյալ գյուղի բոլոր քաղաքացիների համար, յեթե ինքնահարկում կատարելու

նպատակը հանգիսանում և տվյալ գլուղի կուլտուր-տնտեսական այնպիսի կարիքը, փորի բավարարման մեջ շահագրգուված և ամբողջ գլուղը, և յեթե ինքնահարկման որենքով այդ կարիքը նախատեսնված է: Դա նշանակում է վոր այն քաղաքացիների վերաբերյալ փորոնք կամավոր չեն ցանկանալ յենթարկվելու ընդհանուր ժողովի վորոշումին, որենքը այդպիսիների վերաբերյալ թուլատում և կիրառել սախաղական միջոցներ:

Բայց չպետք է մոռանալ, վոր գլուղի ընդհանուր կուլտուր-տնտեսական և հասարակական կարիքների շարքում, կարող յեն պատահել նաև այնպիսի կարիքներ, վորոնց իրազորման մեջ շահագրգուված և միմիայն գլուղի ընակչության մի մասը կամ թե չե վոչ ամբողջ ընակչությունը, որին ակ—վորմե մի կամավորհասարակական ընկերության կարիք, կամ չորանի վարձում, հասարակական բուղայի ձեռք բերելը և այլն, յեթե այդ կարիքների մեջ շահագրգուված և քաղաքացիների մի մասը կամ զուտ հողային համայնքը—ի հարկե նման գեպքերում բոլոր քաղաքացիներին պարտադրել մասնակցելու այդ ծախքերին, կլինի միանգամայն անարդարացի:

Հաշվի առնելով այդ հանգամանքները, ինքնահարկման որենքը բոլոր քաղաքացիների պարտադիր մասնակցությունը սահմանափակում և միայն այն գեպքերով, յեր ինքնահարկումը կատարվում և որենքով նախատեսնված ընդհանուր բնույթ կրող կարիքները բավարարելու նպատակով:

Քյուղի բնակչության մնացած բոլոր կարիքը ները, կարող յեն բավարարվել—բայց առաջ կամ ավոր հիմունքներով: Հոժարակամ համաձայնությամբ ինքնահարկում կատարելու գեպքում, շահագրգուված քաղաքացիների կողմից հրավիրված ընդհանուր ժողովում վորոշվում եւ թե ինչպես և ովքեր պետք է մասնակցեն այդ ծախքերին: Տվյալ գեպքում այդ վորոշումները, պարտադիր չեն կարող լինել այն քաղաքացիների համար, վորոնք ժողովին չեն մասնակցել, բայց գեմ են յեղել այդ վորոշումներին և չեն ցանկացել: Նման գեպքերում, որենքով նախատեսնված հարկի բաշխման կարգը նույնպես պարտադիր չե:

Տվյալ կարիքները բավարարելու մեջ շահագրգուված քաղաքացիները, իրենց ժողովում կարող յեն սահմանել հարկի բաշխման կարգը, և յուրաքանչյուր մասնակցողի վճարումների չափը: Գլուղիորհուրպը, նման հոժարակամ ինքնահարկում կատարելու ժամանակ, վոչ մի աշխատանքի չի մասնակցում: Նրանք իրենց ընդհանուր ժողովում ընտրում յեն լիազորներ, վորոնց և հանձնարարում են հարկի հավաքելը, ծախուելը և այլն:

Ինքնահարկման որենքով նախատեսնված հարկի բաշխման և գանձման կարգը, նույնպես չի կարելի տարածել այն կաղմակերպությունների վրա, վորոնք ըստ իրենց կանոնադրությունների, կարող յեն իրենց անդամներից գանձել առանձին տուրքեր—որին ակ, վարկալին, միլցորատիվ և այլն ընկերությունները, կամ հատուկ նպատակներ ունեցող կամավոր ընկերությունները և այլն:

XVIII. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ.

Նախ և առաջ չպետք է մոռանալ, վոր ընդհանուր ժողովի յուրաքանչյուր վորոշումը զրվում և արձանագրության մեջ հետեւյալ ձևով:

Զհ Ն. 1.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

» գավառի, « » շրջանի,
» գլուղի քաղաքացիների (հասարակության) ընդհանուր ժողովի.

192 թ.

(ամիս, թիվ)

ԳՅՈՒՂԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

» քաղաքացիների ընդհանուր ժողովը, մասնակցությամբ ընդհանուր քաղաքացիների « մթվից, « թվով, վորոնք ոզում են ընտրողակառ

իրավունքով, լսելով զլուղխորհրդի զեկուցումը և քննելով նրա ներկայացրած նախնական նախահաշիվը զլուղդպրոցի կառուցման առթիվ՝ ձայների մեծամասնությամբ «.....» վորոշեց.

ա) Գլուղխորհրդի նախնական նախահաշիվը 4000 ս. արժողություն ունեցող զլուղ գպրացը կառուցելու նպատակով կատարել ինքնահարկում:

բ) Ինքնահարկումը կատարել զրամով:

գ) Յուրաքանչյուր տնտեսությունից կամ քաղաքացուց հասանելիք վճարումները մուծելու համար նշանակել առաջին ժամկետը 19 թ. «-ին, իսկ յերկրորդ ժամկետը
(ամիս, թիվ)

19 թ. « »-ին:
(ամիս, թիվ)

դ) Ինքնահարկումին մասնակցելուց ազատել վորապես չքավորների (կամ վորապես ավլալ ձեռնարկման մեջ չշահագրգռվածների) հետեւալներին. (ցուցակ) անուն, հորանուն, ազգանուն: Միասգլուղհարկից և այլ հարկերից ազատված տնտեսություններից, ինթարկել ինքնահարկման ծախքերին մասնակցելու հետեւալներին. ցուցակ—անուն, հորանուն և ազգանուն: Վորոնցից 1 փայի չափով (հետեւալ անձանց անուն, հորանուն, ազգանուն) 2 փայի չափով « » « » « » « »
3 փայի չափով « » « » « » « »

Ընդհանուր ժողովի նախագահ՝

Քարտուղար՝

Գլուղխորհուրդը ընդհանուր ժողովի հիշալ վորոշումը ստանալուն պես կատարում և ժողովում ընդունված ինքնահարկման գումարի բաշխումն որենքի և ընդհանուր ժողովի վորոշման համաձայն այն բոլոր տնտեսությունների ու քաղաքացիների մեջ, վորոնք մասնակցում են այդ ինքնահարկմանը:

Կատարած բաշխումը գրվում և անվանական ցուցակում հետեւալ ձևով.

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

«	» գալառի, «	» շրջանի,
«	» գլուղի (այսինչ նպատակի համար կատարած)	ինքնահարկման:
		կատարվող)
Ընդհանուր ժողովի արձանագրությունը 19 (թիվ,	» վորոշված և հավաքել զրամով:	թ.
ամիս, թիվ)		
Ընդհանուր փայի բանակը		
Յուրաքանչյուր փային համառում և		
կճարման ժամկետները, առաջինը		յերկրորդը

ՆԵՐ ՀԱՅ ԿԱՐԳԻ	Անուն, հորանուն և ազգանուն	ՅԵՆԹԱԿԱՆ Ե ՎԱՐԴԱՐ-ՄԱՆ		ՎՃԱՐՎԱԾ Ի ԳՈՎԱՄԱՐ (ՀԵՄՆՈՒՅԹ)		ՄԵՐՈՒՄ Ե ԱՆՎՃԱՐ (ՀԵՄՆՈՒՅԹ)		ՎՃԱՐՎԱԾ ԳՈՎԱՄԱՐՆԵՐԻ ՄԵՂՋԱՐՄԱՆ ԺԵՐ	
		ԳՈՎԱՄԱՐԸ		ԳՈՎԱՄԱՐԸ		ԳՈՎԱՄԱՐԸ			
		ՓԱՄ	ՄԱՅԸ	ԳՈՎԱՄԱՐԸ	ԳՈՎԱՄԱՐԸ	ԳՈՎԱՄԱՐԸ	ԳՈՎԱՄԱՐԸ		

Ամեն գեպօւմ, յերբ ինքնահարկումը կատարվում է աշխատանքով մասնակցելու միջոցով կամ թե չե փոխադրական միջոցներ հատկացնելու ձևով, հաշվեառումը կատարվում է փաստորեն աշխատած որերով փոխադրած (կրած) բեռների փթերով

ու տարածությամբ (վերստերով) վերոհիշյալ անվանական ցուցակով, վերածելով բեռնակրությունը և բանվորական որը դրամական արժեքի տեղական գներով: Յեթե ինքնահարկումը կատարվում և բնական պարհակով և ծախսվում և նույնպես (բնամըթերով, զուղիսորհուրդները պարտավոր են հաշիվ պահել ներքոհիշյալ ձևով:

Զհ № 3.

Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ

ինքնահարկման գծով ստացված բնական միջոցների

« » գավ., « » շրջանի,
« » գուղում.

ՄՈՒՏՔ

ՀՆ.Հ Ա Ս Ա Կ Ա Ր Ա Գ Ի Ւ	Ա Մ Հ Ա Ն Ա Բ Ի Ւ	Ա Կ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ
Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Ա Մ Հ Ա Ն Ա Բ Ի Ւ	Ա Կ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ
Ուժից և ստացված	Բանական բարգչութեան պահպան	Համարական բարգչութեան պահպան	Ուժից համար ստրած	Բանական բարգչութեան պահպան	Համարական բարգչութեան պահպան	Ուժից համար ստրած	Բանական բարգչութեան պահպան	Համարական բարգչութեան պահպան
Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.

Հավաքով և ձեռք բերվող շինանյութերի վերաբերակ գյուղխորհուրդը պարտավոր և պահել նյութերի գիրք հետեւալ ձևով:

Զհ № 4.

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր Ի Գ Ի Ր Ի

« » գավ., « » շրջանի,

« » զուղիսորհուրդները պարտավոր են հաշիվ պահել ներքոհիշյալ ձևով:

Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ

ՄՈՒՏՔ

ՀՆ.Հ Ա Ս Ա Կ Ա Ր Ա Գ Ի Ւ	Ա Մ Հ Ա Ն Ա Բ Ի Ւ	Ա Կ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ	Հ Ա Շ Վ Ե Ա Ռ Ո Ւ Ի Մ	Գ Ա Վ Ա Ր Ա Գ Ի Ւ
Ուժից և ստացված	Բանական բարգչութեան պահպան	Համարական բարգչութեան պահպան	Ուժից համար ստրած	Բանական բարգչութեան պահպան	Համարական բարգչութեան պահպան	Ուժից համար ստրած	Բանական բարգչութեան պահպան	Համարական բարգչութեան պահպան
Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.	Ժ. կ.

Յուրաքանչյուր տեսակ նյութի համար բացվում և նոր հաշվիք: Գյուղիուրհուրդները պարտավոր են ինքնահարկման գծով ստացվող գումարների համար տալ անդորրագրեր ընդ սահին կըցած ձեռք: Անդորրագրերի կտրոնը մնում է գյուղխորհոդում:

Զհ № 5.

Կ Տ Ռ Ո Ն

	գյուղխորհուրդ
19	թ. ամսի ին
№	անդորրագրի կտրոն:
«	» մնթ. « կոպ.
	Ստացված և քաղ.
	ից
«	» մնթ. « կոպ.
	Ի՞նչի համար

Ստորագրություն

Կաթք

Ստորագրություն

Հիշալ ձեռվ տված անդորրագիրը պետք և ստորագրված լինի նախագահի, կամ դրամ ընդունելու լիազորված անձի կողմից:

Միջոցների ծախսաման ժամանակ գյուղխորհուրդը ստացական և վերցնում հետեւյալ ձեռվ:

Զհ № 6.

Ա Տ Ա Ց Ա Կ Ա Ն

«	» մնթ. « » կոպ.
19	թ. ամսի ին ստացված և գյուղի գյուղխորհուրդից « » մնթ.
	կոպ. (Ի՞նչի համար)

Ստորագրություն

Փաստաթղթերը, ստացականները և անդորրագրերի կտրոնները պետք ե պահպեն առանձին գործերի մեջ: Պետք և համարկալվեն ու գարսվեն ըստ նրանց կատարման ժամանակի կարգով: Բոլոր փաստաթղթերը պետք և կարվեն:

Ինքնահարկման գծով ստացվող գումարների հաշվեառման համար գյուղխորհուրդը պետք և տանի հետեւյալ գիրքը:

Զհ № 7.

Ինքնահարկման գումարները	Մուտք		Ցելք		Ժանոթություն	
	Մուտք		Ցելք			
	Մնթ.	Կ.	Մնթ.	Կ.		
Ի՞նչ և ուժից և ստացվել, ուր և ուր և հանձնված, ինչի համար և վճարված, անդորրագրերի կտրոնների ԱՆ և ուրիշ փաստաթղթերը						

Վերջապես գլուղխորհուրդը պարտավոր և Աջգործկոմ ներկայացնելու սահմանված ժամկետներին ինքնահարկման վերաբերյալ տեղեկություններ հետեւալ ձևով.

Զե № 8.

ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

» գավ., «	» շրջանի,
» գլուղի գլուղխորհուրդի, 19	թ.
ամսի ից մինչև 19	թ.
	ամսի ը.


Բարեկարգության համար	Գործադրության թվականը	Ժամկետներին համապատասխան լուր	Այսուհետեւ առաջարկությունը								
մ.	կ.	մ.	կ.	մ.	կ.	մ.	կ.	մ.	կ.	մ.	կ.
1. Առ 1-ն հոկտեմբ.	19	թ. կար.									
2. Ստացված և մեկ տարվա ընթաց- քում 19	թ.										
հոկտ. 1-ից առ 1-ն հոկտեմբերի	19	թ. . . .									
Հնդհանուր մուտքը											
Ծախսված և մեկ տարվա ընթաց- քում 19	թ.										
հոկտ. 1-ից առ 1-ն հոկտեմբերի	19	թ.									
Մնում և կանխիկ											

Գլուղխորհուրդի նախագահ՝

Քարտուղար

Սույն ձևով տեղեկանքները, գլուղխորհուրդի կողմից ներկա-
յացնվում են շրջգործկոմ տարեկան 2 անգամ առ 1-ն ապրիլի
և առ 1-ն հոկտեմբերի: Առաջինը ներկայացնվում է ապրիլի
15-ին, չերկրորդը հոկտեմբերի 15-ին: Շրջգործկոմները իրենց
հերթին ներկայացնում են նույն ձևով, շրջանի մասշտաբով
միացյալ տեղեկանքներ, գավառային գործադիր կոմիտեին: Տա-
րեկան 2 անգամ, առ 15-ն ապրիլի—ապրիլի 30-ին, առ 15-ն
հոկտեմբերի—հոկտեմբերի 30-ին:

Գավգործկոմները նույն տեղեկանքները ըստ իրենց գավա-
ռի մասշտաբով ներկայացնում են Հանրապետական Ֆինժողկո-
մատին, վերջինիս կողմից սահմանած ժամկետներում:



ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ.

Ցերեա

I.	Հնդհանուր ծանոթություն ինքնահարկման մասին	3
II.	Ինչպիսի կարիքների համար կարելի ե կատարել ինք- նահարկումը	6
III.	Ինքնահարկումի սահմանման կարգը	8
IV.	Հնդհանուր ժողովների վորոշումները հաստատելու կարգը	10
V.	Ով և յենթարկվում ինքնահարկմանը մասնակցելու .	11
VI.	Ով կարող ե ազատվել ինքնահարկմանը մասնակցե- լուց	11
VII.	Ինքնահարկման գծով փայտերի քանակը վորոշելու կարգը	12
VIII.	Ինքնահարկման զումարների բաշխման կարգը . .	16
IX.	Ինքնահարկման վճարումների ժամկետներ վորոշելու կարգը	18
X.	Կատարած բաշխումն, բողոքարկելու կարգը	19
XI.	Հնդհանուր ժողովների վորոշումները շրջգործկոմինհ- րում հաստատելու կարգը	20
XII.	Ինքնահարկման միջոցների վճարման կարգը	21
XIII.	Ինքնահարկման գծով հավաքվող զումարների պահե- լու և ծախսելու կարգը	22
XIV.	Գյուղխորհուրդների պարտականությունները	23
XV.	Գյուղխորհուրդների վերաստուգիչ հանձնաժողովների պարտականությունները	25
XVI.	Շրջգործկոմների պարտականությունները	26
XVII.	Ի՞նչ գեղագիրում ինքնահարկումը պարտադիր չի կա- րող լինել	27
XVIII.	Ինքնահարկման հաշվետարությունը և հաշվետվու- թյունը	29



9-248

2244-53

807

1
1

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОЗЕДЕНИЯ
Академии Наук
СССР

62

